

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ







## ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ

## Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

|                                               |                                                                                               |                                                                                                           |                                  |
|-----------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------|
| <b>Միեր Անանյան</b><br>(անուն, ազգանուն)      | <b>Վարչության նախագահ,<br/>Գործադիր տնօրեն</b><br>(պաշտոն)                                    | <br>(ստորագրություն)    | <u>14.02.2023</u><br>(ամսաթիվ)   |
| <b>Կարեն Սարգսյան</b><br>(անուն, ազգանուն)    | <b>Վարչության անդամ,<br/>Գործադիր տնօրենի<br/>առաջին տեղակալ</b><br>(պաշտոն)                  | <br>(ստորագրություն)   | <u>13.02.2023</u><br>(ամսաթիվ)   |
| <b>Միեր Գրիգորյան</b><br>(անուն, ազգանուն)    | <b>Վարչության անդամ,<br/>Գործադիր տնօրենի<br/>տեղակալ</b><br>(պաշտոն)                         | <br>(ստորագրություն)    | <u>13.02.2023թ.</u><br>(ամսաթիվ) |
| <b>Բագրատ Ծգմաչյան</b><br>(անուն, ազգանուն)   | <b>Վարչության անդամ,<br/>Գործադիր տնօրենի<br/>տեղակալ</b><br>(պաշտոն)                         | <br>(ստորագրություն)  | <u>13.02.2023թ.</u><br>(ամսաթիվ) |
| <b>Տիգրան Գալստյան</b><br>(անուն, ազգանուն)   | <b>Վարչության անդամ,<br/>Գլխավոր հաշվապահ</b><br>(պաշտոն)                                     | <br>(ստորագրություն)  | <u>13.02.2023թ.</u><br>(ամսաթիվ) |
| <b>Կարեն Հակոբյան</b><br>(անուն, ազգանուն)    | <b>Վարչության անդամ,<br/>Իրավաբանական<br/>վարչության պետ</b><br>(պաշտոն)                      | <br>(ստորագրություն) | <u>13.02.2023թ.</u><br>(ամսաթիվ) |
| <b>Զարուհի Մելքոնյան</b><br>(անուն, ազգանուն) | <b>Վարչության անդամ,<br/>Միջազգային<br/>գործառնությունների<br/>վարչության պետ</b><br>(պաշտոն) | <br>(ստորագրություն)  | <u>13.02.2023</u><br>(ամսաթիվ)   |

**ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ  
ԱՐԱՐԱՏՔԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑԸ**

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կառավարման մարմինների միջանկյալ սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- Հաշվետու ժամանակաշրջանում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:



## Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու եռամսյակում Բանկի տոկոսային և նմանատիպ եկամուտները կազմել են 6,228.2 մլն. ՀՀ դրամ, ինչը 1,280.9 մլն. ՀՀ դրամով կամ 25.9%-ով գերազանցում է 2021թ. 4-րդ եռամսյակի համապատասխան ցուցանիշը:

Հաշվետու եռամսյակում Բանկի տոկոսային և նմանատիպ ծախսերը կազմել են 2,854.4 մլն. ՀՀ դրամ, որոնք 2021թ. 4-րդ եռամսյակի համեմատ աճել են 120.4 մլն. ՀՀ դրամով կամ 4.4%-ով:

Հաշվետու եռամսյակում Բանկի ստացած կոմիսիոն և այլ վճարներից զուտ եկամուտները կազմել են 972.6 մլն. ՀՀ դրամ, որոնք 2021թ. 4-րդ եռամսյակի համեմատ աճել են 710.3 մլն. ՀՀ դրամով կամ 270.8%-ով:

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա 4-րդ եռամսյակի համեմատ, Բանկի ընդհանուր վարչական ծախսերն աճել են 643.5 մլն. ՀՀ դրամով կամ 40.3%-ով՝ կազմելով 2,240.1 մլն. ՀՀ դրամ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը<sup>1</sup>:

*հազ. ՀՀ դրամ*

|                                                               | 2022թ.<br>4-րդ<br>եռամսյակ | 2021թ.<br>4-րդ<br>եռամսյակ |
|---------------------------------------------------------------|----------------------------|----------------------------|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ                               | 6,228,195                  | 4,947,249                  |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր                                   | -2,854,366                 | -2,733,930                 |
| <b>Զուտ տոկոսային եկամուտ</b>                                 | <b>3,373,829</b>           | <b>2,213,319</b>           |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ                     | 1,566,137                  | 622,688                    |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր                         | -593,587                   | -360,422                   |
| <b>Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ</b>                    | <b>972,550</b>             | <b>262,266</b>             |
| Եկամուտ շահաբաժիններից                                        |                            |                            |
| Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից                    | 2,242,982                  | 515,480                    |
| Այլ գործառնական եկամուտ                                       | 195,008                    | 94,520                     |
| <b>Գործառնական եկամուտներ</b>                                 | <b>2,437,990</b>           | <b>610,000</b>             |
| Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին | -798,994                   | -2,333,973                 |
| Ընդհանուր վարչական ծախսեր                                     | -2,240,126                 | -1,596,589                 |
| Այլ գործառնական ծախսեր                                        | -992,686                   | -345,979                   |
| <b>Շահույթ/(վնաս) հարկումից առաջ</b>                          | <b>2,752,563</b>           | <b>-1,190,956</b>          |
| Շահութահարկի գծով ծախս                                        | -1,192,564                 | -46,192                    |
| <b>Շահույթ հարկումից հետո</b>                                 | <b>1,559,999</b>           | <b>-1,237,148</b>          |

<sup>1</sup> Տվյալների աղբյուր են հանդիսանում արտաքին աուդիտ չանցած միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

## Շահույթ, շահութաբերություն և շահաբաժիններ

Հաշվետու եռամսյակի արդյունքներով՝ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո Բանկի շահույթը կազմել է 1,560.0 մլն. ՀՀ դրամ, որի արդյունքում մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 832.7 ՀՀ դրամ՝ 2021թ. համադրելի ժամանակահատվածի -702.6 ՀՀ դրամ փոխարեն:

**2022թ. չորրորդ եռամսյակի** արդյունքներով Բանկի շահութաբերության ցուցանիշները հետևյալն են՝

**ROE** (կապիտալի շահութաբերություն)՝ **3.384% (12.53%<sup>2</sup>)**,

**ROA** (ակտիվների շահութաբերություն)՝ **0.454% (1.82%<sup>2</sup>)**:

**2021թ. չորրորդ եռամսյակի** արդյունքներով Բանկի շահութաբերության ցուցանիշները հետևյալն են՝

**ROE** (կապիտալի շահութաբերություն)՝ **-3.085% (-12.84%<sup>3</sup>)**,


**ROA** (ակտիվների շահութաբերություն)՝ **-0.463% (-1.85%<sup>2</sup>)**:

## Ակտիվներ

Հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի ավարտին Բանկի ակտիվները կազմել են 353,492.1 մլն. ՀՀ դրամ, որոնք նախորդ եռամսյակի համեմատ աճել են 5.7%-ով (19,207.6 մլն. ՀՀ դրամով):

<sup>2</sup> Տարեկանացված:


<sup>3</sup> Տարեկանացված:



### Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառվածություններ

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի և այլ փոխառվածությունների մնացորդները կազմել են 161,239.1 մլն. ՀՀ դրամ, որոնք 2022թ. 3-ին եռամսյակի համեմատ ավելացել են 1,583.5 մլն. ՀՀ դրամով կամ 1.0%-ով:

**Հաճախորդներին տրամադրված վարկերի դինամիկան  
(մլն. ՀՀ դրամ)**



**Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական  
արդյունքի միջոցով չափվող այլ ֆինանսական ակտիվներ**

Հաշվետու ժամանակահատվածի ավարտին Բանկի Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ ֆինանսական ակտիվների մնացորդները կազմել են 42,572.8 մլն. ՀՀ դրամ, որոնք 30.09.2022թ. համեմատ աճել են 1,125.2 մլն. ՀՀ դրամով կամ 2.7%-ով:

**Պարտավորություններ**

2022թ.-ի չորրորդ եռամսյակի ավարտին Բանկի պարտավորությունները կազմել են 305,172.9 մլն. ՀՀ դրամ, որոնք 30.09.2022թ.-ի համեմատ աճել են 14,779.3 մլն. ՀՀ դրամով կամ 5.1%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է Հաճախորդների նկատմամբ պարտավորություններ ծավալի ավելացումով՝ 21,198.2 մլն. ՀՀ դրամով կամ 12.3%-ով և Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորություններ նվազումով՝ 5,485.6 մլն. ՀՀ դրամով կամ 5.3%-ով :

**Կապիտալ**

2022թ.-ի չորրորդ եռամսյակի ավարտին Բանկի կապիտալը կազմել է 48,319.2 մլն. ՀՀ դրամ, 30.09.2022թ.-ի համեմատ աճելով 4,428.3 մլն. ՀՀ դրամով կամ 10.1%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է Բանկի կանոնադրական կապիտալի և Էմիսիոն եկամուտի համալրումով և

### **Արտարժույթային գործառնություններ**

Հաշվետու ժամանակահատվածում Բանկի արտարժույթային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմել են.

ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 431.8 մլն. ԱՄՆ դոլար,

Եվրոյով գործարքների ծավալը՝ 917.2 մլն. Եվրո,

ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 37,297.4 մլն. ՌԴ ռուբլի:

Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից հաշվետու եռամսյակում ստացված զուտ եկամուտը կազմել է 2,347.4 մլն. ՀՀ դրամ՝ նախորդ եռամսյակի 3,362.2 մլն. ՀՀ փոխարեն:

### **Ծառայություններ և հաճախորդներ**

2022թ.-ի չորրորդ եռամսյակի ընթացքում Բանկի հաճախորդների քանակը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 13,154-ով՝ եռամսյակի վերջի դրությամբ կազմելով 162,380 մարդ:

Բանկը ֆիզիկական և իրավաբանական անձանցից ընդունում է ժամկետային և ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով և արտարժույթով: Բանկը հաճախորդներին առաջարկում է ավանդներ՝ տարբերակված ըստ նպատակների, ժամկետների, տոկոսադրույքների և տոկոսների վճարման հաճախականության:

Բանկն իրականացնում է վարկավորման հետևյալ տեսակները՝ բիզնեսի վարկավորում (այդ թվում՝ վարկային գծերի, օվերդրաֆտների, երաշխիքների, փաստաթղթային ակրեդիտիվների տրամադրում), բնակարանի ձեռքբերման և նորոգման հիփոթեքային վարկավորում, ավտովարկավորում, լոմբարդային վարկավորում, սպառողական այլ վարկավորում, ինչպես նաև լիզինգային և ֆակտորինգային գործառնություններ:

Բանկը 1997թ.-ից սկսած անդամակցում է S.W.I.F.T. միջազգային համակարգին, իսկ 2022թ.-ից սկսած՝ СПФС (Система передачи финансовых сообщений Банка России) համակարգին:

Բանկը թղթակցային հաշիվներ ունի տեղական և միջազգային մի շարք բանկերում, ինչը հնարավորություն է տալիս ապահովել Բանկի հաճախորդների վճարահաշվարկային սպասարկումը ցանկացած ազատ փոխարկելի արժույթով և վճարային գործիքով:

Բանկն առանձնապես կարևորում է արագ դրամական փոխանցումների համակարգերի հետ համագործակցության ընդլայնումը և կատարելագործումը: Այս նպատակով Բանկը շարունակ ընդլայնում է մատուցվող համագործակցությունը: Բանկը համագործակցում է Unistream (Unistream cash to card (G3)), MoneyGram, Ria Money Transfer, Intel Express և MoneyTun (MoneyTun Bank Deposit online ծառայությունը) արագ դրամական փոխանցումների համակարգերի հետ: Մատուցվում են նաև միջազգային փոխանցումների հաճախորդների հաշիվներին

հեռախոսահամարի նշումով մուտքագրման ավտոմատ ծառայությունները՝ Тинькофф online և Fora online- Мир:

Հաշվետու եռամսյակում Բանկի միջոցով արտերկրից ստացված և արտերկիր կատարված փոխանցումների ծավալը կազմել է 1,097,914.2 մլն. ՀՀ դրամին համարժեք գումար՝ 2022թ.-ի 2-ին եռամսյակի 792,340.7մլն. ՀՀ դրամի փոխարեն:

Կարևորելով արդիական բանկային պրոդուկտների ներմուծումը Բանկ, ՄԳ վարչությունը ներդրել է հեռախոսահամարի միջովոցով բանկային հավելվածներով փոխանցումների ստացման հետևյալ ծառայությունները՝ Тинькофф-онлайн, Фора-Онлайн, որոնց միջոցով 4-րդ եռամսյակի ընթացքում իրականացված փոխանցումների ծավալը կազմել է 993.8 մլն ՀՀ դրամին համարժեք գումար:

Ներկայումս ՄԳ վարչությունը աշխատում է նոր դրամական փոխանցումների ծառայությունների ներդրման ուղղությամբ՝ Ria Money Bank Deposit և մի քանի նոր պրոդուկտների, որոնք քննարկման փուլում են: Բանկում ներդրել է Unistream G3 ծրագիրը, որի միջոցով հնարավոր եղավ վերագործարկել Unistream Cash to Card ծառայությունը: Մանիտուն արագ դրամակ փոխանցումների համակարգի հետ համատեղ ներդրվեց Բանկում Moneytun Bank Deposit ծառայությունը, որի միջոցով հնարավոր է ԱՄՆ-ում տեղակայված Moneytun համակարգի սպասարկման կետերից, ինչպես նաև Մանիտուն համակարգի կայքէջից կատարել շահառուների հաշիվների համալրումներ:


Բանկի համար զարգացման գերակա ուղղություններից մեկն է վճարային քարտերի թողարկման ու սպասարկման համակարգերի կատարելագործումը՝ հաշվի առնելով ներկա պայմաններում բնակչության կողմից աճող պահանջարկը և անկանխիկ վճարումների ավելացմանն ուղղված պետական քաղաքականությունը:

Բանկը թողարկում է ArCa բանկային վճարային քարտեր (ArCa Classic, ArCa կենսաթոշակային, ArCa Junior, “ArCa Մոր և Մանկան”, ArCa Gift, ArCa Green Line), Visa քարտեր (Visa Classic, Visa Gold, Visa Infinite), Master քարտեր (MasterCard Standard, MasterCard Gold, MasterCard Business), ինչպես նաև Diners քարտեր (Diners Club Young Professional, Diners Club Super Premium):

31.12.2022թ. դրությամբ Բանկի ակտիվ գործող վճարային քարտերի թիվը կազմել է 142,587 հատ, որից 73,130-ը բաժին է ընկնում ArCa վճարային քարտերին, 35,445-ը՝ MasterCard, 32,886-ը՝ Visa Card միջազգային վճարային քարտերին, 1,126-ը՝ Diners Club միջազգային վճարային քարտերին:



### Վճարային քարտեր առ 31.12.2022թ.



Հաճախորդներին վճարահաշվարկային համալիր ծառայությունների մատուցման նպատակով՝ Բանկը զարգացնում է հարկերի, տուրքերի, էլեկտրաէներգիայի, հեռախոսավարձի և այլ հանրային ծառայությունների դիմաց ֆիզիկական անձանցից վճարների ընդունման աշխատանքները:

Բանկն իրականացնում է Սոցիալական փաթեթի հաշվի բացման և սպասարկման գործառույթը, ինչպես նաև որպես ապահովագրական գործակալ իրականացնում է ապահովագրական պայմանագրերի վաճառք:

Ավանդական բանկային ծառայություններից բացի, Բանկն առաջարկում է նաև ներդրումային և թվային բանկային ծառայություններ: Մասնավորապես, ներդրումային բանկային ծառայությունների շրջանակներում Բանկն իր իրավաբանական և ֆիզիկական անձ հաճախորդներին առաջարկում է ներքին շուկաներում լայն շրջանակ ընդգրկող ֆինանսական ակտիվներում ներդրումների կատարման ծառայություններ:

Բանկը մատուցում է արժեթղթերի տեղաբաշխման, շուկայի ստեղծման, արժեթղթերի պահառության և ռեեստրավարման ծառայություններ, ինչպես նաև իրականացնում է Կենտրոնական դեպոզիտարիայի ծառայությունների միջնորդավորում:

Բանկի կողմից նոր ծառայությունների առաջարկը և մատուցումն իրականացվում է շուկայում սպառողների կողմից ներկայացված պահանջմունքի ուսումնասիրության հիման վրա: Բանկի նոր առաջարկների վերաբերյալ տեղեկատվությունը տեղ է գտնում ինտերնետում՝ Բանկի տնային էջում, ինչպես նաև գլխավոր գրասենյակի և մասնաճյուղերի սպասարկման սրահներում:

### Ամփոփ ֆինանսական տվյալներ

հազ. ՀՀ դրամ

| Ցուցանիշի անվանումը | 2022թ.<br>4-րդ եռամսյակ | 2022թ.<br>3-րդ եռամսյակ |
|---------------------|-------------------------|-------------------------|
|                     |                         |                         |

|                                                                                                         | (աուդիտ չանցած) | (աուդիտ չանցած) |
|---------------------------------------------------------------------------------------------------------|-----------------|-----------------|
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո                                                   | 1,559,999       | 4,280,281       |
| Սեփական կապիտալի միջին մեծություն[1]                                                                    | 46,105,043      | 43,421,799      |
| Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), % [2]                                                         | <b>13.53%</b>   | <b>39.43%</b>   |
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո                                                   | 1,559,999       | 4,280,281       |
| Ընդհանուր ակտիվների միջին մեծություն <sup>3</sup>                                                       | 343,888,311     | 321,873,713     |
| <b>Ակտիվների շահութաբերություն (ROA), %<sup>4</sup></b>                                                 | <b>1.81%</b>    | <b>5.32%</b>    |
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո                                                   | 1,559,999       | 4,280,281       |
| Գործառնական եկամուտ[3]                                                                                  | 6,784,369       | 7,598,465       |
| <b>Զուտ շահույթի մարժա (NPM), %</b>                                                                     | <b>22.99%</b>   | <b>56.33%</b>   |
| Գործառնական եկամուտ                                                                                     | 6,784,369       | 7,598,465       |
| Ընդհանուր ակտիվների միջին մեծություն <sup>3</sup>                                                       | 343,888,311     | 321,873,713     |
| <b>Ակտիվների օգտագործման գործակից (AU), %<sup>4</sup></b>                                               | <b>7.89%</b>    | <b>9.44%</b>    |
| Ընդհանուր ակտիվների միջին մեծություն <sup>3</sup>                                                       | 343,888,311     | 321,873,713     |
| Սեփական կապիտալի միջին մեծություն <sup>3</sup>                                                          | 46,105,043      | 43,421,799      |
| <b>Սեփական կապիտալի մուտքային կատոր (EM)</b>                                                            | <b>7.46</b>     | <b>7.41</b>     |
| Զուտ տոկոսային եկամուտ                                                                                  | 3,373,829       | 3,127,874       |
| Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն (ՄԵԱ) <sup>3</sup>                                                 | 245,726,536     | 243,148,802     |
| <b>Զուտ տոկոսային մարժա (NIM), %<sup>4</sup></b>                                                        | <b>5.49%</b>    | <b>5.15%</b>    |
| Տոկոսային եկամուտ (ՏԵ)                                                                                  | 6,228,195       | 6,034,860       |
| Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն (ՄԵԱ) <sup>3</sup>                                                 | 245,726,536     | 243,148,802     |
| <b>Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %<sup>4</sup></b>                                              | <b>10.14%</b>   | <b>9.93%</b>    |
| Տոկոսային ծախսեր (ՏԾ)                                                                                   | 2,854,366       | 2,906,986       |
| Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր (ՄԾՊ) <sup>3</sup>                         | 288,780,618     | 270,727,454     |
| <b>Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %<sup>4</sup></b> | <b>3.95%</b>    | <b>4.30%</b>    |
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո                                                   | 1,559,999       | 4,280,281       |
| Բաժնետոմսերի միջին կշռված թիվը, հազ. Հատ                                                                | 1,873,345       | 1,760,731       |
| <b>Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS), ՀՀ դրամ</b>                                               | <b>832.73</b>   | <b>2,430.97</b> |
| <b>Սպրեդ, % <sup>4</sup> (ՏԵ)/(ՄԵԱ)-(ՏԾ)/(ՄԾՊ)</b>                                                      | <b>6.18%</b>    | <b>5.63%</b>    |

**Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած էական դեպքերի նկարագիրը**

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում՝

-ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 23.11.2022թ. որոշում (որոշում ՈՐԽ0102-22/01Լ) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2006 թվականի հուլիսի 28-ի թիվ 27/5 որոշմամբ հաստատված Սերաստիա մասնաճյուղի կանոնադրության 1.13. կետը փոփոխել՝ շարադրելով հետևյալ

բովանդակությամբ. «1.13. ՀՀ, ք.Երևան, Սեբաստիա 141/1 շենք, թիվ 41ա տարածք և ՀՀ, ք. Երևան, Մալաթիա Սեբաստիայի փողոց 141/1 շենք, 72/1 տարածք:»:

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 01.09.2022թ. որոշում (որոշում ՈՐԽ0102-41/01Լ-Հ) ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 08.04.2022թ. որոշմամբ գրանցված ծրագրային ազդագրի հիման վրա 2022 թվականի սեպտեմբերի 08-ին թողարկել 3,000,000 (երեք միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 120,000 (մեկ հարյուր քսան հազար) հատ դոլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ 27 (քսանյոթ) ամիս մարման ժամկետով, 4.25% (չորս ամբողջ քսանհինգ հարյուրերորդական տոկոս) տարեկան եկամտաբերությամբ, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ:

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման արդյունքում կանոնադրական կապիտալի համալրման հետ կապված կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները 2022թ. դեկտեմբերի 27-ին գրանցվել են ՀՀ Կենտրոնական բանկում:

**Հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը,  
որոնց հետ առնչվելու է թողարկողը հաջորդ հաշվետու  
ժամանակաշրջանում**

Թողարկողին առնչվող ռիսկերը կապված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներից և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Բանկը մշտապես զարգացնում է իր ֆինանսատնտեսական վիճակին սպառնացող ռիսկերի կառավարման արդյունավետությունը և որպես հիմնական ռիսկեր դիտարկում՝ վարկային, իրացվելիության, շուկայական, գործառնական, տնտեսության վիճակի և օրենսդրության փոփոխություններով պայմանավորված ռիսկերը: Թողարկողի բնականոն գործունեությանը սպառնացող ռիսկեր կարող են առաջացնել նաև արտաքին գործոնները, որոնք թողարկողից անկախ են: Նման ռիսկերից գերծմնալու կամ հետևանքները նվազեցնելու նպատակով բանկը մշակում է գործունեության անընդհատության ապահովման և արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգեր:

**Վարկային ռիսկը** բանկի վարկառուների, փոխառուների և բանկի նկատմամբ պարտավորություններ ստանձնած անձանց կողմից պայմանագրային պարտավորությունները ժամանակին և սահմանված չափով կամ մասամբ չկատարելու հավանականությունն է, ինչը կարող է վնաս հասցնել բանկի կապիտալին: Վարկային ռիսկի արդյունավետ կառավարումը բանկի կարևորագույն խնդիրներից է: Վարկային ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Բանկը կարևորում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան, հսկողություն սահմանում տարբեր տեսակի կենտրոնացումների վրա, վարկավորելիս որպես ապահովվածություն նախապատվություն է տալիս վարկառուի վարկունակությանը և

վճարունակությանը, ինչի արդյունքում խնդրահարույց վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում բավականին փոքր է:

**Իրացվելիության ռիսկ**, երբ Բանկի ազատ դրամական միջոցները բավարար չեն ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ դրամական ներհոսքի կրճատման, ներգրավման աղբյուրների սահմանափակման, մակրոտնտեսական իրավիճակի փոփոխության, օրենսդրական փոփոխությունների, նորմատիվային դաշտի փոփոխությունների և այլ պատճառներով: Իրացվելիության ռիսկի հետևանքով Բանկի հնարավորություններն ակտիվներն արագ և շուկայական գնով իրացնելը կոժվարանա, հետևաբար նաև խնդիրներ կարող են առաջանալ պայմանագրային պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու: Իրացվելիության ռիսկերի կառավարման նպատակով Բանկում ներդրվել են սահմանաչափերի պահպանման և ամենօրյա կտրվածքով հսկողության իրականացման մեխանիզմներ: Բանկում իրականացվում են ընթացիկ, կարճաժամկետ և երկարաժամկետ իրացվելիության ռիսկի կառավարում, իրացվելիության ճեղքվածքի և բացասական ազդեցության սցենարային վերլուծություններ:

**Ընդհանուր տնտեսության ռիսկեր**, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել բանկի գործունեության վրա, մասնավորապես կարող է ուղեկցվել Բանկի կողմից սպասվող եկամուտների նվազմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարություններով:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Բանկային գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Բանկային գործունեության լիցենզավորման և կարգավորման նպատակը ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունն է, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և բանկային ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Բանկի գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:

**Մրցակցային ռիսկ**, որն առաջանում է ՀՀ բանկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում, ինչն էլ իր ազդեցությունն է ունենում Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա, որի պատճառով Բանկը չի կարող երաշխավորել պլանավորված շահույթի ստացումը:

**Կադրերի հոսունության ռիսկ**, որն իրենից ներկայացնում է մրցունակ կադրերի աշխատանքից ազատման դեպքում Բանկի վնասներ կրելու հավանականությունը:

**Գործառնական ռիսկը**, որը կարող է ի հայտ գալ ներքին գործընթացների, համակարգերի խափանմամբ, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների բացասական ազդեցության արդյունքում, ինչը կարող է կորուստ բերել բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա: Գործառնական ռիսկի հետևանքով կարող է վտանգվել նաև բանկի համբավը: Գործառնական

ռիսկերի գնահատման և մոնիտորինգի համար Բանկում գործում է ռիսկային պատահարների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման համակարգ:

**Տոկոսադրույքի ռիսկ**, որը ֆինանսական գործիքների տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում արժեքի փոփոխության ռիսկն է, որն էլ իր հերթին կարող է ազդել Բանկի զուտ շահույթի վրա: Շուկայական տոկոսադրույքների փոփոխությունը կարող է ազդել Բանկի ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա: Նման տատանումները տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում կարող են ինչպես ավելացնել, այնպես էլ նվազեցնել տոկոսային մարժան, հանգեցնել վնասների: Բանկում տոկոսադրույքի կառավարման նպատակով կիրառվում են բազիսային, եկամտաբերության կորի փոփոխության և ժամկետային անհամապատասխանության ռիսկերի գծով վերլուծություններ:

**Արտարժույթի ռիսկ**, որն իրենից ներկայացնում է արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկը: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից:

Ելնելով ՀՀ-ում տնտեսական, քաղաքական զարգացումներից և հաշվի առնելով բանկային համակարգի զարգացման ներկա վիճակը, Բանկի զգուշավոր գործելակերպը, Բանկ-Հաճախորդ գործարար հարաբերությունների ներկայիս դրսևորումները, ինչպես նաև այն, որ ՀՀ կենտրոնական բանկը հստակ կանոնակարգել է և խիստ հսկողություն է իրականացնում բանկերի նկատմամբ՝ նշված ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը ձգտում է նվազագույնի:

### **Բանկի հեռագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար**

Բանկի հեռանկարային զարգացումը միտված է Բանկի ցուցանիշների աճի ապահովմանը, հաճախորդներին հասանելի, նորարարական, շուկայում մրցունակ ծառայությունների մատուցմանն ու հավատարիմ հաճախորդների շրջանակի, որակյալ կադրային ներուժի պահպանմանը, միջազգային գործընկերների հետ փոխշահավետ հարաբերությունների հաստատմանը:

Բանկը նպատակադրել է ինչպես ինտենսիվ, այնպես էլ էքստենսիվ աճ իր հիմնական ցուցանիշների և բանկային ծառայությունների բոլոր ուղղությունների գծով՝ ՀՀ ֆինանսաբանկային շուկայում առաջարկելով միջազգային լավագույն բանկային լուծումների և հաճախորդների արագ փոփոխվող կարիքների վրա հիմնված ծառայություններ:

Հաշվետու տարին նորմատիվային դաշտի որոշ ասպեկտներով դրական ազդեցություն ունեցավ Բանկի վրա: Մասնավորապես Բանկը տարին փակեց զգալի բարձր կապիտալիզացիայի և իրացվելիության ցուցանիշների մակարդակով: Նշված բարձր ցուցանիշները հնարավորություն են ընձեռում բավականին ագրեսիվ ներդրումային քաղաքականություն որդեգրել առնվազն կարճաժամկետ հատվածում: Սակայն ներկայիս բավականին տուրբուլենտ ժամանակաշրջանում առկա են տնտեսական անկման կամ տնտեսական աճի տեմպերի զգալի նվազման ռիսկեր, որոնց

հնարավորինս անցնցում դիմակայելու նպատակով անհրաժեշտ կլինի պահպանել Բանկի որդեգրած քաղաքականությունից բարձր պաշտպանիչ բուֆերներ և՛ կապիտալիզացիայի և՛ իրացվելիության մասով: Այսինքն առկա են Բանկի կողմից որդեգրած ակտիվապասիվային քաղաքականությամբ սահմանված ցուցանիշների ընդունելի և արդյունավետ համարվող մակարդակից շեղումների ռիսկեր:

2022թ. ընթացքով զարգացած երկրների կողմից դրամավարկային կրճատողական քաղաքականության առկայությամբ և միջազգային շուկաներում միջոցների կտրուկ և սպասումներից ավելի վաղ թանկացման գործընթացներով: Բանկի կողմից միջազգային գործընկերներից միջոցների ներգրավումը իրականացավ գրեթե կրկնակի ավելի բարձր տոկոսադրույքներով, իսկ գործող լողացող տոկոսադրույքով վարկերի դրույքներն իրենց հերթին վերանայվեցին բարձրացման ուղղությամբ: Չնայած այն հանգամանքին, որ զարգացած երկրներում ձևավորված սպասումների համաձայն բարձր տոկոսադրույքների ժամանակաշրջանը կարող է արագ վերափոխվել տոկոսադրույքների նվազման ժամանակաշրջանի՝ զսպող դրամավարկային քաղաքականության երկար պահպանումը կարող է շարունակական բացասական ճնշում գործադրել զուտ տոկոսային մարժայի ցուցանիշի վրա:

Այսպիսով՝ Բանկն առաջիկա ժամանակահատվածում բանկային համակարգում մրցակցությանը դիմակայելու, իր կայուն ու վստահելի դիրքը պահպանելու և ֆինանսատնտեսական ցուցանիշների առաջանցիկ աճն ապահովելու նպատակով առանձնացրել է հետևյալ ռազմավարական ուղենիշները՝

- Գործունեության երեք ուղղությունների շարունակական զարգացում,
- Վարկային պորտֆելի կառավարման արդյունավետության բարձրացում,
- Միջոցների ներգրավման արդյունավետության բարձրացում,
- Մասնաճյուղային ցանցի արդյունավետ կառավարում,
- Կապիտալի ավելացում՝ ձևավորված զուտ շահույթի հաշվին,
- Սպասարկման որակի բարելավմանն ուղղված մշտական աշխատանքների իրականացում, հաճախորդների բավարարվածության մակարդակի բարձրացում,
- Վաճառքի և մարքեթինգի նորագույն գործիքների ներդրում և կիրառում,
- Անձնակազմի զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում,
- Բանկի կազմակերպչական կառուցվածքի և կառավարման համակարգերի արդյունավետության բարձրացում:



Հավելված 6.2  
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի  
2007 թվականի հունիսի 10-ի թիվ 205 -Ն որոշմամբ

**ՄԻԶՐԱԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**Այլ համադրված ֆինանսական արդյունքների մասին (նս. թիվ 6 ր)**

«31» դեկտեմբերի, 2022թ.

**Աղաղակաճանկ ԲԲԸ Բ. Երևան, Փ. Բուզանդ 87**

(բանկի սնվեմունք և գանձված վաճառք)

(նախորդ պատ)

| ԱՆՎԱՆՈՒՄԸ                                                            | Ընթացիկ միջանկյալ<br>ծանոթագրության | Հաշվառու<br>ծանոթագրության | Նախորդող<br>ֆինանսական տարվա<br>համադրված քննարկի<br>միջանկյալ | Նախորդ<br>ծանոթագրության |
|----------------------------------------------------------------------|-------------------------------------|----------------------------|----------------------------------------------------------------|--------------------------|
|                                                                      |                                     |                            |                                                                |                          |
| <b>Այլ համադրված ֆինանսական արդյունք</b>                             | (227,656)                           | (1,454,130)                | 92,427                                                         | (600,205)                |
| Փոխադրված տարբերություններ պարտքյա գործառնությունների<br>վերանայելիք | -                                   | -                          | -                                                              | -                        |
| Վաճառքի համար մուտքի ֆինանսական ակտիվներ վերագրվածություններ         | (227,656)                           | (1,454,130)                | 92,427                                                         | (600,205)                |
| Դրամական հաշվի հեղանկում                                             | -                                   | -                          | -                                                              | -                        |
| Ոչ քննարկվող ակտիվների վերագրվածությունները օգտուներ                 | 11,898                              | 19,209                     | (59,009)                                                       | (1,847)                  |
| Փոխադրվածություններ սկիզբից պարտքյա կարգումների պահուստում           | 38,836                              | 258,286                    | (16,305)                                                       | 108,369                  |
| Այլ համադրված եկամուտ գծով շահաբաժնի                                 | (176,922)                           | (1,176,635)                | 17,113                                                         | (493,683)                |
| <b>Այլ համադրված ֆինանսական արդյունք հարկումից հետո</b>              | 1,383,077                           | 10,571,402                 | (2,873,449)                                                    | (447,940)                |
| <b>Համադրված ֆինանսական արդյունք</b>                                 |                                     |                            |                                                                |                          |
| <b>Այլ թվում</b>                                                     |                                     |                            |                                                                |                          |
| Մայր խաղանկարության բաժնեմաս                                         |                                     |                            |                                                                |                          |
| Զվերանվարվող բաժնեմաս                                                |                                     |                            |                                                                |                          |





**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**Ֆինանսական վիճակի մասին (ձև թիվ 7)**  
**«31» դեկտեմբերի 2022թ.**  
**ԱրարատԲանկ ԲԲԸ ք.Նրևան, Բուզանդ 87**  
(բանկի ամփոփումայն և գումարի վայրը)

(նազար պլան)

|       | ԱՆՎԱՆՈՒՄԸ                                                                                  | Ծանոթագրություններ | Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (չստուգված) | Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված) |
|-------|--------------------------------------------------------------------------------------------|--------------------|--------------------------------------------------------------|------------------------------------------------------|
| 1     | Ակտիվներ                                                                                   |                    |                                                              |                                                      |
| 1.1   | Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում                               | 13                 | 98,745,024                                                   | 45,322,640                                           |
| 1.2   | Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ                                    |                    | -                                                            | -                                                    |
| 1.3   | Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ                           | 14                 | 28,725,051                                                   | 14,660,897                                           |
| 1.4   | Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ                     | 15                 | -                                                            | -                                                    |
| 1.5   | Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և այլ փոխառություններ            | 16                 | 161,239,052                                                  | 147,784,698                                          |
| 1.6   | Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ ֆինանսական ակտիվներ | 17                 | 42,572,847                                                   | 32,972,492                                           |
| 1.7   | Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ                                     | 18                 | 9,031,499                                                    | 13,860,246                                           |
| 1.8   | Ներդրումներ վերահսկվող անձանց կառնադրական կապիտալում                                       | 19                 | -                                                            | -                                                    |
| 1.9   | Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ                                                   |                    | 1,805,494                                                    | 1,884,816                                            |
| 1.10  | Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ                                                  | 20                 | 8,360,430                                                    | 8,197,695                                            |
| 1.11  | Հետաձգված հարկային ակտիվներ                                                                | 3                  | 1,214,988                                                    | 816,184                                              |
| 1.12  | Այլ ակտիվներ                                                                               | 21                 | 1,797,712                                                    | 2,202,478                                            |
| 1.13  | Գույքի                                                                                     |                    | -                                                            | 362,602                                              |
|       | <b>Ընդամենը՝ ակտիվներ</b>                                                                  |                    | <b>353,492,097</b>                                           | <b>268,064,748</b>                                   |
| 2     | Պարտավորություններ                                                                         |                    |                                                              |                                                      |
| 2.1   | Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ                  | 22                 | 98,180,803                                                   | 95,354,459                                           |
| 2.2   | Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ                                                   | 23                 | 192,885,142                                                  | 116,343,060                                          |
| 2.3   | Բանկի կողմից թողարկված արժեթղթեր                                                           | 24                 | 5,487,084                                                    | 12,998,487                                           |
| 2.4   | Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող պարտավորություն                         | 25                 | -                                                            | -                                                    |
| 2.5   | Վճարվելիք գումարներ                                                                        | 26                 | 63,052                                                       | 38,926                                               |
| 2.6   | Հետաձգված հարկային պարտավորություններ                                                      | 3                  | -                                                            | -                                                    |
| 2.7   | Պահուստներ                                                                                 | 30                 | -                                                            | -                                                    |
| 2.8   | Այլ պարտավորություններ                                                                     | 27                 | 8,556,831                                                    | 5,551,192                                            |
|       | <b>Ընդամենը՝ պարտավորություններ</b>                                                        |                    | <b>305,172,912</b>                                           | <b>230,286,124</b>                                   |
| 3     | Կապիտալ                                                                                    |                    |                                                              |                                                      |
| 3.1   | Կառնադրական կապիտալ                                                                        | 28                 | 9,366,725                                                    | 8,803,655                                            |
| 3.2   | Էմիսիոն եկամուտ                                                                            | 29                 | 10,263,687                                                   | 8,031,745                                            |
| 3.3   | Պահուստներ՝                                                                                |                    |                                                              |                                                      |
| 3.3.1 | Գլխավոր պահուստ                                                                            | 30                 | 3,500,000                                                    | 3,500,000                                            |
| 3.3.2 | Վերագմահատման պահուստներ                                                                   |                    | (1,127,093)                                                  | (124,605)                                            |
| 3.4   | Զբաղիված շահույթ (վնաս)                                                                    |                    | 26,315,866                                                   | 17,567,829                                           |
|       | Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ                                                     |                    |                                                              |                                                      |
|       | Փոքրամասնության բաժնեմաս                                                                   |                    |                                                              |                                                      |
|       | <b>Ընդամենը՝ կապիտալ</b>                                                                   |                    | <b>48,319,185</b>                                            | <b>37,778,624</b>                                    |
|       | <b>Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ</b>                                              |                    | <b>353,492,097</b>                                           | <b>268,064,748</b>                                   |

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 12.01.2023թ





| Ընթացիկ տարվա միջամիջոց ժամանակացույցում (տարվա սկզբից անդադար) (II աղյուսակ)                                        |  |           |   |           |            |           |   |             |   |             |             |             |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------|--|-----------|---|-----------|------------|-----------|---|-------------|---|-------------|-------------|-------------|
| 9. Մնացորդ ֆինանսական տարվա սկզբում<br>առ 01 հունվարի 2022թ. (շտապետ)                                                |  | 8,803,655 | - | 8,803,655 | 8,031,745  | 3,500,000 | - | (124,605)   | - | 17,567,829  | 37,778,624  | 37,778,624  |
| 9.1. Հաշվառված խաչվածում բյուջային տարբերությունների վարկադրամների<br>ներկայումս սկսված և երբեք սկսված ճշգրտում      |  | -         | - | -         | -          | -         | - | -           | - | -           | -           | -           |
| 10. Արտադրված մնացորդ                                                                                                |  | -         | - | -         | -          | -         | - | -           | - | -           | -           | -           |
| 11. Զանգվածային (սեփականություն) հատկությունների համախառն արժեքի փոփոխությունները (համախառն արժեքի փոփոխությունները) |  | 563,070   | - | 563,070   | 2,231,942  | -         | - | -           | - | -           | 2,795,012   | 2,795,012   |
| 11.1. Ներդրումներ կառավարման կառավարման և կառավարման<br>կառավարման այլ առ                                            |  | 563,070   | - | 563,070   | 2,231,942  | -         | - | -           | - | -           | 2,795,012   | 2,795,012   |
| 11.2. Մանրամասն կառավարման հիման վրա արժեքի փոփոխությունները (համախառն արժեքի փոփոխությունները)                      |  | -         | - | -         | -          | -         | - | -           | - | -           | -           | -           |
| 12. Այլ համախառն արժեքի փոփոխությունները                                                                             |  | -         | - | -         | -          | -         | - | (1,002,488) | - | 11,748,037  | 10,745,549  | 10,745,549  |
| 13. Համախառն արժեքի փոփոխությունները                                                                                 |  | -         | - | -         | -          | -         | - | -           | - | (3,000,000) | (3,000,000) | (3,000,000) |
| 14. Մնացորդ կապիտալ տարրերի այլ ակտիվներ (նվազում), այլ<br>թվեր                                                      |  | -         | - | -         | -          | -         | - | -           | - | -           | -           | -           |
| 14.1. Բյուջային տարրերի կապիտալ տարրերի գործընթացի զարգացման արժեքի փոփոխությունները (նվազում)                       |  | -         | - | -         | -          | -         | - | -           | - | -           | -           | -           |
| 15. Ներդրում չափեր, այլ թվեր                                                                                         |  | -         | - | -         | -          | -         | - | -           | - | -           | -           | -           |
| 15.1. Մուտքային գործընթացի արժեքի փոփոխությունները                                                                   |  | -         | - | -         | -          | -         | - | -           | - | -           | -           | -           |
| 15.2. Գլխավոր արժեքի փոփոխությունները (նվազում)                                                                      |  | -         | - | -         | -          | -         | - | -           | - | -           | -           | -           |
| 15.3. Ենթակառուցվածքի արժեքի փոփոխությունները                                                                        |  | -         | - | -         | -          | -         | - | -           | - | -           | -           | -           |
| 15.4. Հիմնական միջոցների և այլ նյութական ակտիվների<br>վերականգնման արժեքի փոփոխությունները (նվազում)                 |  | -         | - | -         | -          | -         | - | -           | - | -           | -           | -           |
| 15.5. Մեծածախ կապիտալ տարրերի այլ ակտիվների մեղմում, այլ<br>թվեր                                                     |  | -         | - | -         | -          | -         | - | -           | - | -           | -           | -           |
| 16. Մնացորդ միջամիջոց խաչվածում ժամանակացույցի վերջում<br>31 դեկտեմբերի 2022թ. (շտապետ)                              |  | 9,366,725 | - | 9,366,725 | 10,263,687 | 3,500,000 | - | (1,127,093) | - | 26,315,866  | 48,319,185  | 48,319,185  |

Հիմնական վավերացման ամսաթիվ 12.01.2023թ.

Հավելված 9.1.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի  
2007 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 205 Ն որոշման

**ՄԻՋԱՆԿՑԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (ձև թիվ 9 ա)**  
**(անուղղակի մեթոդ)**  
**«31» դեկտեմբերի 2022թ.**  
**ԱրարատԲանկ ԲԲԸ ք.Երևան, Բուզանո 87**  
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

| ԱՆՎԱՆՈՒՄԸ                                                                  | Նախնական<br>ժամանակաշրջան | Հաշվետու<br>ժամանակաշրջան |
|----------------------------------------------------------------------------|---------------------------|---------------------------|
| 1                                                                          | 2                         | 3                         |
| <b>Շահույթ հարկումից առաջ</b>                                              | 2,018,460                 | 14,426,539                |
| <b>Գործառնական գործունեություն</b>                                         |                           |                           |
| Հիմնական միջոցների ամորտիզացիա                                             | 902,550                   | 965,216                   |
| Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա                                         | 447,669                   | 583,634                   |
| Դործառնական գործունեությանը վերագրելի այլ ակտիվների (աճ)/նվազում           | (4,792,654)               | (48,042,716)              |
| Դործառնական գործունեությանը վերագրելի այլ պարտավորությունների աճ/(նվազում) | 36,248,822                | 124,344,484               |
| <b>Գործառնական գործունեությունից ընդամենը ճշգրտումներ</b>                  | <b>34,824,847</b>         | <b>92,277,157</b>         |
| <b>Ներդրումային գործունեություն</b>                                        |                           |                           |
| Կապիտալ ծախսումներ                                                         | (185,975)                 | (697,872)                 |
| Ներդրումներ                                                                | (6,623,030)               | (7,523,240)               |
| Ներդրումային գործունեությանը վերագրելի այլ ակտիվների (աճ)/նվազում          | -                         | -                         |
| <b>Ներդրումային գործունեությունից ընդամենը ճշգրտումներ</b>                 | <b>(6,809,005)</b>        | <b>(8,221,112)</b>        |
| <b>Ֆինանսական գործունեություն</b>                                          |                           |                           |
| Փոխառությունների և այլ վճարվելիք գումարների աճ/(նվազում)                   | 1,432,667                 | (18,910,844)              |
| Վճարված դիվիդենդներ                                                        | -                         | (3,000,000)               |
| Բաժնետոմսերի վաճառք (հետգում)                                              | -                         | 2,795,012                 |
| Ֆինանսական գործունեությանը վերագրելի այլ պարտավորությունների աճ/(նվազում)  | (56,317)                  | 1                         |
| <b>Ֆինանսական գործունեությունից ընդամենը ճշգրտումներ</b>                   | <b>1,376,350</b>          | <b>(19,115,831)</b>       |
| <b>Փոխարժեքի տատանումների ազդեցությունը</b>                                | <b>(4,039,270)</b>        | <b>(10,237,912)</b>       |
| <b>Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին</b>          | <b>50,288,486</b>         | <b>104,991,281</b>        |

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 12.01.2023թ.



Հավելված 1  
Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի խորհրդի  
2022 թվականի հունիսի 28-ի թիվ 112-Ն  
 որոշման  
Հավելված 3  
Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի խորհրդի  
2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն  
 որոշման Հավելվածի  
(եռամսյակային)

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՐՅՈՒՆ  
Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

ԱրարատԲանկ ԲԲԸ  
10/1/2022 թ-ից 31/12/22 թ.

(հազ. դրամ)

| Նորմատիվներ                                                                                                                                                              | Փաստացի մեծություն | ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը | Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------|-----------------------------------------------------------------|---------------------------------------|
| 1                                                                                                                                                                        | 2                  | 3                                                               | 4                                     |
| Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը                                                                                                                            | 9,366,725          | 1,000,000                                                       | խախտում առկա չէ                       |
| Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը                                                                                                                             | 42,177,774         | 30,000,000                                                      | խախտում առկա չէ                       |
| Ն. Հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը                                                                             | 15.46%             | min9%                                                           | խախտում առկա չէ                       |
| Ն. Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը                                                                            | 15.01%             | min12%                                                          | խախտում առկա չէ                       |
| Ն. Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը                                                                    | 39.70%             | min15%                                                          | խախտում առկա չէ                       |
| Ն. Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցալահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը                                                                      | 98.46%             | min60%                                                          | խախտում առկա չէ                       |
| Ն. Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)                                                      | 165.70%            | min 100%                                                        | խախտում առկա չէ                       |
| Ն. (FX) Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)             | 180.70%            | min 100%                                                        | խախտում առկա չէ                       |
| Ն. (FX) Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (յուրաքանչյուր երկրորդ խմբի նշանակալի արժույթի գծով)                 | 0.00%              | min 100%                                                        | Չի հաշվարկվել                         |
| Ն. Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)                                          | 167.40%            | min 100%                                                        | խախտում առկա չէ                       |
| Ն. (FX) Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով) | 166.20%            | min 100%                                                        | խախտում առկա չէ                       |
| Ն. (FX) Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (յուրաքանչյուր երկրորդ խմբի նշանակալի արժույթի գծով)     | 0.00%              | min 100%                                                        | Չի հաշվարկվել                         |
| Ն. Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը                                                                                                                             | 10.14%             | max20%                                                          | խախտում առկա չէ                       |
| Ն. Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը                                                                                                                        | 102.80%            | max500%                                                         | խախտում առկա չէ                       |
| Ն. Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը                                                                                                                | 3.29%              | max5%                                                           | խախտում առկա չէ                       |
| Ն. Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը                                                                                                            | 15.46%             | max20%                                                          | խախտում առկա չէ                       |
| Ն. պահանջի և գրավի արժեքի սահմանափակ հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից չեղումը (<< դրամով)                                                                   | 1.22%              | max10%                                                          | խախտում առկա չէ                       |
| Ն. պահանջի և գրավի արժեքի սահմանափակ հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից չեղումը (արտարժույթով)                                                                | 1.69%              | max5%                                                           | խախտում առկա չէ                       |
| Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադրյալ պահուստների նվազագույն չափը                                                                          | X                  |                                                                 |                                       |
| << դրամով.                                                                                                                                                               | X                  |                                                                 |                                       |
| ԱՄՆ դոլարով.                                                                                                                                                             | X                  | min 4% min 6% << դրամով.                                        | խախտում առկա չէ                       |
| Եվրոյով                                                                                                                                                                  | X                  | min 12% Եվրոյով.                                                | խախտում առկա չէ                       |
|                                                                                                                                                                          | X                  | min 6% << դրամով.                                               | խախտում առկա չէ                       |
|                                                                                                                                                                          |                    | min 12% ԱՄՆ դոլարով.                                            | խախտում առկա չէ                       |
| Բոլոր արտարժույթների գծով դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը                                                                          | 2.58%              | max10%                                                          | խախտում առկա չէ                       |
| Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը                                               |                    |                                                                 |                                       |
| ԱՄՆ դոլարով                                                                                                                                                              | 2.37%              | max7%                                                           | խախտում առկա չէ                       |
| Եվրոյով.                                                                                                                                                                 | 0.00%              | max7%                                                           | խախտում առկա չէ                       |
| Ռուսական ռուբլիով.                                                                                                                                                       | 0.00%              | max7%                                                           | խախտում առկա չէ                       |
| Այլ                                                                                                                                                                      | 0.20%              | max7%                                                           | խախտում առկա չէ                       |





**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**  
**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Ձև 5)**

(հազ.դրամ)

01 հունվարի 2022թ.-ից մինչև 31 դեկտեմբերի 2022թ.

**Ծանոթագրություն 1. Իրավական դաշտ**

**1.1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հանդիսանում է բաց բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը հանդիսանում է 1991թ.-ին հիմնված "Հայկապ Բանկ" ՍՊԸ իրավահաջորդը: Բանկը գրանցվել է 20 սեպտեմբերի 1991թ. ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N4 արտոնագրային համարով:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժույթային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց ավանդների հատուցում երաշխավորող պետական համակարգի, Հայաստանի բանկերի միության, ArCa, Master Card, Visa International, Diners Club քարտային վճարահաշվարկային համակարգերի անդամ:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում, թվով 23 մասնաճյուղ գտնվում են Երևանում, ևս 29-ը՝ ՀՀ մարզերում և 1-ը՝ ԼՂՀ-ում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Բուզանդի 87շենք, 85 տարածք:

14.12.2016թ. Միացման պայմանագրի համաձայն Բանկը 2017թ. ձեռք է բերել վերահսկողություն Հայկական զարգացման Բանկ ԲԲԸ-ի նկատմամբ, որի լիցենզիան հետ է կանչվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

2022թ.-ի չորրորդ եռամսյակում Բանկի աշխատակիցների միջին թիվը կազմում էր 999 մարդ:

**1.2. Գործարար միջավայր**

Հայաստանում Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում և Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից:

2020թ. անկումից հետո Հայաստանի տնտեսությունը թևակոխել է կայուն վերականգնման փուլ: Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված Կառավարության ջանքերը, ՓՄՁ-ների համար ֆինանսական հասանելիության ընդլայնումը, առաջնահերթ սոցիալական ծախսերի համար հնարավորությունների ստեղծումը, ինչպես նաև կապիտալի շուկայի զարգացման ընդլայնված գործողությունների ծրագիրը նույնպես կարող են Հայաստանի տնտեսության կայունության և զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծել:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Այնուամենայնիվ, ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Բանկի գործունեության վրա կարող են տարբերվել Բանկի ղեկավարության ներկա սպասումներից:

**Ծանոթագրություն 2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները**

**2.1. Համապատասխանությունը**

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՍԿ):

Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

## 2.2. Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով:

## 2.3. Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

## 2.4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Բանկն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2021թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Բանկը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք ուժի մեջ են մտել, բայց դեռ կիրառելի չեն:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2021թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա: *(թողնել միայն բանկի համար կիրառելիները)*

- COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ 2021թ հունիսի 30-ից հետո (ՖՀՄՍ 16 փոփոխություններ),
- Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2) (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 16, ՀՀՄՍ 4 և ՀՀՄՍ 7 փոփոխություններ):

### Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև: *:(թողնել միայն բանկի համար կիրառելիները)*

- ՖՀՄՍ 17, , Ապահովագրության պայմանագրեր
- Փոփոխություններ ՖՀՄՍ 17 Ապահովագրական պայմանագրերում (Փոփոխություններ ՖՀՄՍ 17-ում և ՀՀՄՍ 4-ում),
- Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)
- Հղումներ հայեցակարգային հիմունքներին (ՖՀՄՍ 3 փոփոխություններ)
- Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսեր (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)

- 2018-2020թթ. *ՖՅՄՍ-ների տարեկան բարեփոխումներ-(ՖՅՄՍ 1, ՖՅՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ):*
- *Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություններ),*
- *Մեկ գործարքի հետ կապված ակտիվների և պարտավորությունների հետաձգված հարկ:*

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

#### *Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ*

Բանկը կիրառում է ձեռքբերման մեթոդը ձեռնարկատիրական գործունեության միավորումների հաշվառման համար: Դուստր ընկերության վերահսկողության ձեռքբերման նպատակով Բանկի կողմից փոխանցված փոխհատուցումը հաշվարկվում է Բանկի կողմից թողարկված սեփական կապիտալի և պարտավորությունների, փոխանցված ակտիվների ձեռքբերման ամսաթվով հաշվառվող իրական արժեքով, որը ներառում է պայմանական հատուցման համաձայնությունից առաջացող որևէ ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը: Ձեռքբերման ծախսերը ճանաչվում են որպես ծախս դրանց տեղի ունենալու պահին:

Ձեռքբերված ակտիվները և ստանձնած պարտավորությունները սովորաբար չափվում են ձեռքբերման ամսաթվով իրական արժեքով:

#### **2.4.1. Եկամուտների և ծախսերի ճանաչում**

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

##### *Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ*

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

##### *Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք*

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից



ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով ճշգրտումը:

#### *Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ*

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տես 4.5.6 ծանոթագրությունում:

#### *Այլ տոկոսային եկամուտ*

Այլ տոկոսային եկամտի հաշվարկում անվանական տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն արժեքի նկատմամբ գծային հիմունքով:

#### *Կումիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր*

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեզրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում կարողությունների կառավարման, ֆինանսական պլանավորման և ակտիվների պահպանման ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ:

#### *Շահաբաժիններից եկամուտ*

Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

#### ***Ձուտ եկամուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից***

Ձուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսները, շահաբաժինները:

#### **2.4.2. Արտարժույթ**

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը և ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ներկայացվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվության զուտ եկամուտ կամ վնաս արտարժույթային գործառնություններից հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված դրամային արժեթղթերի (որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով ներդրումային արժեթղթեր դասակարգվող իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերություններ միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված

փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսեր, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից օգուտ կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ բաժնային գործիքներ դասակարգված բաժնետոմսերինը, որոնց համար ընտրությունը կատարվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում իրական արժեքի հետագա փոփոխությունները ներկայացնելու տարբերակը, ընդգրկվում են կապիտալում՝ իրական արժեքի փոփոխությունների պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ եկամուտ կամ վնաս արտարժույթային գործառնություններից հոդվածի արտարժույթի առջ ու վաճառքից զուտ եկամուտ կամ վնաս տողում:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

|                     | 31 դեկտեմբերի<br>2022թ. | 31 դեկտեմբերի<br>2021թ. |
|---------------------|-------------------------|-------------------------|
| ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար | 393.57                  | 485.91                  |
| ՀՀ դրամ/1 եվրո      | 420.06                  | 539.21                  |

### 2.4.3. Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչև համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գույքի ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն

հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության ,Այլ ծախսերե հոդվածում:

## **Ֆինանսական գործիքներ**

### **2.4.4. Ճանաչում և սկզբնական չափում**

Բանկն սկզբնապես ճանաչում է վարկերը և փոխատվությունները, ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Բանկի՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են դրանց ձեռքբերմանը կամ թողարկմանը:

### **2.4.5. Դասակարգում**

#### ***Ֆինանսական ակտիվներ***

Սկզբնական ճանաչման դեպքում ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույքները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույքները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Առևտրային նպատակներով չափվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա

փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր այլ ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

### *Բիզնես մոդելի գնահատում*

Բանկը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությամբ տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Բանկի ղեկավարությանը.
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Բանկը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

### *Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)*

Այս գնահատման նպատակով մայր գումարե է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: Տոկոսը կազմված է փողի ժամանակային արժեքի և պարտքային ռիսկի փոխհատուցումից, այլ ռիսկերի և ֆինանսական ակտիվի պահպանման հետ կապված ծախսերի փոխհատուցումից (օրինակ՝ իրացվելիության ռիսկ և վարչական ծախսեր), ինչպես նաև շահույթի մարժայից: Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Բանկը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Գնահատման ժամանակ Բանկը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման առանձնահատկությունները,
- վաղաժամկետ մարման և երկարաձգման հնարավորությունը,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Բանկի պահանջը (օրինակ՝ առանց ռեգրեսի պահանջի իրավունքի ակտիվների պայմանավորվածություններ) և



- առանձնահատկությունները, որոնք փոխում են դրամի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

#### *Վերադասակարգումներ*

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Բանկը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

#### *Ֆինանսական պարտավորություններ*

Բանկը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

### **2.4.6. Ապաճանաչում**

#### *Ֆինանսական ակտիվներ*

Բանկը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տես նաև ծանոթագրություն 4.5.4) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա տարածվող հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված փոխհատուցման գումարի տարբերությունը (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված ցանկացած կուտակված օգուտը կամ վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային բաժնային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված ցանկացած կուտակային օգուտ/վնաս չի ճանաչվում շահույթում կամ վնասում այդ արժեթղթերի ապաճանաչման դեպքում: Մասնակցությունն ապաճանաչման պայմաններին բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում, որն առաջանում է կամ պահպանվում է Բանկի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկը գործարքներ է կնքում, որոնց համաձայն՝ փոխանցում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահում է փոխանցված ակտիվների կամ բոլոր, կամ գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, կամ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի՝ որպես փոխառության տրամադրման և վաճառքի ու հետգնման գործարքները:

Եթե ակտիվները վաճառվում են երրորդ կողմին համանման գնով հետգնման սվոպով, գործարքը հաշվառվում է որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարք, որը նման է վաճառքի և հետգնման գործարքներին, քանի որ Բանկը պահպանում է նմանատիպ ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները:

Գործարքներում, որոնցում Բանկը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Որոշ գործարքներում Բանկը պահպանում է փոխանցված ֆինանսական ակտիվը վճարի դիմաց սպասարկելու պարտավորությունը: Փոխանցված ակտիվը ապաճանաչվում է, եթե բավարարում է ապաճանաչման չափանիշներին: Ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում են սպասարկման պայմանագրով, եթե սպասարկման վճարը ավելին է (ակտիվ) կամ պակաս (պարտավորություն), քան սպասարկման դիմաց բավարար չափով հատուցումը:

#### *Ֆինանսական պարտավորություններ*

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

## 2.4.7. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխություն

### *Ֆինանսական ակտիվներ*

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Բանկը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են առոչինջ: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տես 4.5.3 ծանոթագրություն), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Բանկը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տես 4.5.6 ծանոթագրություն), ապա օգուտը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

### *Ֆինանսական պարտավորություններ*

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմաններով հիմնավորված նոր ֆինանսական պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

## 2.4.8. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն գուման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՀՖՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Բանկի առևտրային գործունեության ընթացքում:

## 2.4.9. Արժեզրկում

Բանկը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները (ECL) հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր
- վարկերի տրամադրման պարտավորվածություններ
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Բանկը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Բանկը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին:

- հաշվետու ամսաթվի դրությամբ դեֆոլտի ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,



- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք պայմանավորված են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում տեղի ունեցող դեֆոլտ առաջացնող իրադարձություններով:

Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում դեֆոլտի բոլոր հնարավոր դեպքերի հետևանքով:

### *Ակնկալվող պարտքային կորուստների չափում*

Ե՛վ գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Բանկը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է 38.1.2 ծանոթագրությունում:

Վերոնշյալի հիման վրա՝ Բանկը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2 և փուլ 3, ինչպես նկարագրված է ստորև՝

| -վարկեր                                                               | -                  | -                 |
| -այլ                                                                  | -                  | -                 |
| -հաշվեգրված տոկոսներ                                                  | -                  | -                 |
| <b>Ընդամենը</b>                                                       | <b>1,007,148</b>   | <b>828,723</b>    |
| <b>ԶԶ ռեզիդենտ իրավաբանական անձանց, հիմնարկների նկատմամբ</b>          |                    |                   |
| -ընթացիկ հաշիվներ                                                     | 45,208,224         | 26,858,577        |
| -ժամկետային ավանդներ                                                  | 7,944,037          | 3,641,189         |
| -ռեպո(հետգնման) պայմանագրեր                                           | -                  | -                 |
| -այլ                                                                  | 5,283,564          | 757,731           |
| -հաշվեգրված տոկոսներ                                                  | 56,007             | 14,344            |
| <b>Ընդամենը</b>                                                       | <b>58,491,832</b>  | <b>31,271,841</b> |
| <b>Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց, հիմնարկների նկատմամբ</b>          |                    |                   |
| -ընթացիկ հաշիվներ                                                     | 4,391,211          | 204,835           |
| -ժամկետային ավանդներ                                                  | -                  | -                 |
| -այլ                                                                  | -                  | -                 |
| -հաշվեգրված տոկոսներ                                                  | 76                 | 66                |
| <b>Ընդամենը</b>                                                       | <b>4,391,287</b>   | <b>204,901</b>    |
| <b>ԶԶ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերերի նկատմամբ</b>                      |                    |                   |
| -ընթացիկ հաշիվներ                                                     | 1,804,476          | 844,251           |
| -ժամկետային ավանդներ                                                  | -                  | -                 |
| -ռեպո(հետգնման) պայմանագրեր                                           | -                  | -                 |
| -այլ                                                                  | 44,952             | 7,634             |
| -հաշվեգրված տոկոսներ                                                  | -                  | -                 |
| <b>Ընդամենը</b>                                                       | <b>1,849,428</b>   | <b>851,885</b>    |
| <b>Ոչ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերերի նկատմամբ</b>                      |                    |                   |
| -ընթացիկ հաշիվներ                                                     | -                  | -                 |
| -այլ                                                                  | -                  | -                 |
| <b>Ընդամենը</b>                                                       | <b>-</b>           | <b>-</b>          |
| <b>ԶԶ ռեզիդենտ ֆիզիկական անձանց նկատմամբ</b>                          |                    |                   |
| -ընթացիկ հաշիվներ                                                     | 44,910,619         | 19,602,120        |
| -ցպահանջ ավանդներ                                                     | 27,839             | 36,099            |
| -ժամկետային ավանդներ                                                  | 65,156,453         | 56,602,169        |
| -ռեպո(հետգնման) պայմանագրեր                                           | -                  | -                 |
| -ժամկետային փոխառություն                                              | 1,613,637          | 1,968,572         |
| -այլ                                                                  | 596,253            | 490,777           |
| -հաշվեգրված տոկոսներ                                                  | 219,670            | 213,433           |
| <b>Ընդամենը</b>                                                       | <b>112,524,471</b> | <b>78,913,170</b> |
| <b>Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց նկատմամբ</b>                          |                    |                   |

|                                                          |                    |                    |
|----------------------------------------------------------|--------------------|--------------------|
| -ընթացիկ հաշիվներ                                        | 9,455,926          | 1,797,034          |
| -ցպահանջ ավանդներ                                        | 926                | 4,260              |
| -ժամկետային ավանդներ                                     | 5,110,788          | 2,418,009          |
| -այլ                                                     | 40,212             | 49,057             |
| -հաշվեգրված տոկոսներ                                     | 13,124             | 4,180              |
| <b>Ընդամենը</b>                                          | <b>14,620,976</b>  | <b>4,272,540</b>   |
| <b>Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ</b> | <b>192,885,142</b> | <b>116,343,060</b> |

31.12.2022թ. դրությամբ վարկերի ապահովման միջոց հանդիսացել են 3 821 634 հազ. ՀՀ դրամին համարժեք դրամական միջոցներ:

31.12.2021թ. դրությամբ վարկերի ապահովման միջոց հանդիսացել են 1 833 918 հազ. ՀՀ դրամին համարժեք դրամական միջոցներ:

#### Բանկի ավանդատուների թվաքանակը

|                                             | 31.12.2022   | 31.12.2021   |
|---------------------------------------------|--------------|--------------|
| ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձինք, հիմնարկներ | 60           | 50           |
| Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք, հիմնարկներ | -            | -            |
| ՀՀ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերեր             | -            | -            |
| Ոչ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերեր             | -            | -            |
| ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք                | 8,155        | 7,279        |
| Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք                | 200          | 95           |
| <b>Ընդամենը</b>                             | <b>8,415</b> | <b>7,424</b> |

#### Ծանոթագրություն 24

##### Բանկի կողմից թողարկված արժեթղթեր

|                                                | 31.12.2022       | 31.12.2021        |
|------------------------------------------------|------------------|-------------------|
| Բանկի կողմից թողարկված ավանդային սերտիֆիկատներ | -                | -                 |
| Բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր  | -                | -                 |
| Բանկի կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր     | 5,452,358        | 12,894,028        |
| Բանկի կողմից թողարկված արտոնյալ բաժնետոմսեր    | -                | -                 |
| Թողարկված այլ արժեթղթեր                        | -                | -                 |
| Հաշվեգրված տոկոսներ                            | 34,726           | 104,459           |
| <b>Ընդամենը</b>                                | <b>5,487,084</b> | <b>12,998,487</b> |

08.09.2022թ. Բանկի կողմից թողարկվել է 27 ամիս ժամկետայնությամբ 4.25 % եկամտաբերությամբ 3 000 000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 200 000 հատ սովորական պարտատոմս:

21.04.2022թ. Բանկի կողմից թողարկվել է 27 ամիս ժամկետայնությամբ 5.5 % եկամտաբերությամբ 5 000 000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 200 000 հատ սովորական պարտատոմս:

29.10.2019թ. Բանկի կողմից թողարկվել է 51 ամիս ժամկետայնությամբ 5.5 % եկամտաբերությամբ 3 000 000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 120 000 հատ սովորական պարտատոմս:

11.06.2018թ. Բանկի կողմից թողարկվել է 52 ամիս ժամկետայնությամբ 5.25 % եկամտաբերությամբ 3 000 000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 120 000 հատ սովորական պարտատոմս:



Ծանոթագրություն 25

Շահութակ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող պարտավորություն

|                                                                | 31.12.2022 | 31.12.2021 |
|----------------------------------------------------------------|------------|------------|
| Շահութակ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող գործիքներ՝ | -          | -          |
| - ֆյուչերս                                                     | -          | -          |
| - ֆորվարդ                                                      | -          | -          |
| - օպցիոն                                                       | -          | -          |
| - սվոպ                                                         | -          | -          |
| - այլ                                                          | -          | -          |
| Հեջավորման ածանցյալ գործիքներ                                  | -          | -          |
| Այլ                                                            | -          | -          |
| Ընդամենը                                                       | -          | -          |

Ծանոթագրություն 26 Վճարվելիք գումարներ

|                                              | 31.12.2022 | 31.12.2021 |
|----------------------------------------------|------------|------------|
| Շահաբաժիններ                                 | 6,464      | 2,581      |
| Հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով | -          | -          |
| Ավանդների ապահովագրության գծով               | 56,588     | 36,345     |
| Ընդամենը                                     | 63,052     | 38,926     |

Հետաձգված հարկային պարտավորություն

|                                    | 31.12.2022  | 31.12.2021 |
|------------------------------------|-------------|------------|
| Հետաձգված հարկային պարտավորություն | 184,942     | 723,687    |
| Հետաձգված հարկային պարտավորություն | 1,399,930   | 1,539,872  |
| Հետաձգված հարկային ակտիվ           | (1,214,988) | (816,185)  |
| Ընդամենը                           | (1,214,988) | (816,185)  |

Ընթացիկ հարկի գծով պարտավորություն

|                                        | 31.12.2022 | 31.12.2021 |
|----------------------------------------|------------|------------|
| Ընթացիկ հարկի գծով պարտավորություն     |            |            |
| Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով | 2,794,567  | 434,752    |
| Կանխավճարներ շահութահարկի գծով         | 380,000    | 200,000    |
| Ընդամենը                               | 2,414,567  | 234,752    |

Ծանոթագրություն 27

Այլ պարտավորություններ

|                                                                    | 31.12.2022 | 31.12.2021 |
|--------------------------------------------------------------------|------------|------------|
| Այլ պարտավորություններ                                             |            |            |
| Հաշվարկային պարտավորություններ չեկերով և այլ վճարային փաստաթղթերով | -          | -          |
| Հաշվարկային պարտավորություններ ակրեդիտիվների գծով                  | 95,889     | 97,405     |
| Այլ հաշվարկների գծով                                               | -          | -          |
| Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով                                  |            |            |
| - շահութահարկի գծով                                                | 2,414,567  | 234,752    |
| - ԱԱՀ-ի գծով                                                       | 2,875      | 1,653      |
| - այլ հարկերի ու տուրքերի գծով                                     | 196,661    | 138,285    |
| - սոցիալական ապահովագրության վճարումների գծով                      | 39,390     | 22,077     |
| Պարտավորություններ աշխատակիցների նկատմամբ աշխատավարձի գծով         | 1,193,604  | 974,388    |
| Կրեդիտորական պարտքեր մատակարարների նկատմամբ                        | 226,674    | 349,093    |

|                                                           |                  |                  |
|-----------------------------------------------------------|------------------|------------------|
| Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով | -                | -                |
| Այլ անձանց վարձակալության գծով վճարվելիք գումարներ        | 3,302,023        | 3,531,085        |
| Այլ պարտավորություններ                                    | 1,085,148        | 202,454          |
| <b>Մնացորդը ժամանակաշրջանի վերջում</b>                    | <b>8,556,831</b> | <b>5,551,192</b> |

#### Ծանոթագրություն 28

##### Կանոնադրական կապիտալ

|                                                  | 31.12.2022       | 31.12.2021       |
|--------------------------------------------------|------------------|------------------|
| Սովորական բաժնետոմսեր                            | 9,366,725        | 8,803,655        |
| Բաժնետոմսերի քանակը                              | 1,873,345        | 1,760,731        |
| Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը                  | 5000 դրամ        | 5000 դրամ        |
| Արտոնյալ բաժնետոմսեր                             | -                | -                |
| Բաժնետոմսերի քանակը                              | -                | -                |
| Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը                  | -                | -                |
| Բաժնենասեր, փայեր                                | -                | -                |
| Բանկի կողմից ետ գնված բաժնետոմսերի գնման գումարը | -                | -                |
| Ետ գնված բաժնետոմսերի քանակը                     | -                | -                |
| <b>Ընդամենը</b>                                  | <b>9,366,725</b> | <b>8,803,655</b> |

2022թ. ընթացքում Բանկի բաժնետիրական կապիտալը ավելացել է 5 000 ՀՀ դրամ անվանական արժեքով, թվով 112 614 հատ սովորական բաժնետոմսերով, որոնց ընդհանուր գումարը կազմում է 563 070 հազ. ՀՀ դրամ:



31.12.2022թ.

| Նշանակալից մասնակցի անունը/անվանումը | Բանկում ունեցած մասնակցության գումարը | Բանկում ունեցած մասնակցության չափը տոկոսային հարաբերությամբ | Մասնակցի գործունեության տեսակը (իրավաբանական անձանց համար) |
|--------------------------------------|---------------------------------------|-------------------------------------------------------------|------------------------------------------------------------|
| "Ֆլեշ" ՍՊԸ                           | 6,402,640                             | 68.36%                                                      | վառելիքի ներմուծում, մեծածախ և մանրածախ առևտուր            |
| Բեգլարյան Բարսեղ Գերասիմի            | 2,001,510                             | 21.37%                                                      |                                                            |
| Բեգլարյան Սանասար Բարսեղի            | 931,160                               | 9.94%                                                       |                                                            |

31.12.2021թ.

| Նշանակալից մասնակցի անունը/անվանումը | Բանկում ունեցած մասնակցության գումարը | Բանկում ունեցած մասնակցության չափը տոկոսային հարաբերությամբ | Մասնակցի գործունեության տեսակը (իրավաբանական անձանց համար) |
|--------------------------------------|---------------------------------------|-------------------------------------------------------------|------------------------------------------------------------|
| "Ֆլեշ" ՍՊԸ                           | 6,402,640                             | 72.73%                                                      | վառելիքի ներմուծում, մեծածախ և մանրածախ առևտուր            |
| Բեգլարյան Բարսեղ Գերասիմի            | 1,991,940                             | 22.62%                                                      |                                                            |
| Բեգլարյան Սանասար Բարսեղի            | 377,660                               | 4.29%                                                       |                                                            |

| Կանոնադրական կապիտալի ավելացում (որամական միջոցներով) | 31.12.2021 | 31.12.2020 |
|-------------------------------------------------------|------------|------------|
| Սովորական բաժնետոմսեր (հազ.դրամ)                      | 563,070    | -          |
| Բաժնետոմսերի քանակը                                   | 112,614    | -          |
| Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը                       | 5000 դրամ  | 5000 դրամ  |

2021թ. և 2022թ. չորրորդ եռամսյակում կանոնադրական կապիտալի նվազում հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի հաշվին չի կատարվել:

**Ծանոթագրություն 29 Սեփական կապիտալի այլ տարրեր**

|                 | 31.12.2022        | 31.12.2021       |
|-----------------|-------------------|------------------|
| Էմիսիոն եկամուտ | 10,263,687        | 8,031,745        |
| <b>Ընդամենը</b> | <b>10,263,687</b> | <b>8,031,745</b> |

**Ծանոթագրություն 30 Պահուստներ, պայմանական դեպքեր և պոտենցիալ այլ պարտավորություններ**

| Պահուստներ                | 31.12.2022       | 31.12.2021       |
|---------------------------|------------------|------------------|
| -գլխավոր պահուստ          | 3,500,000        | 3,500,000        |
| -վերագնահատման պահուստներ | -                | -                |
| -այլ պահուստներ           | (1,127,093)      | (124,605)        |
| <b>Ընդամենը</b>           | <b>2,372,907</b> | <b>3,375,395</b> |

**Ծանոթագրություն 30.1.Բանկի իրավական պարտավորությունները**

31.12.2022թ. դրությամբ Բանկը իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և իր իրավական պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չի առաջացել:

**Ծանոթագրություն 30.2 Բանկի հարկային պարտավորությունները**

31.12.2022թ. դրությամբ Բանկն ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները, և իր հարկային պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չի առաջացել:

**Ծանոթագրություն 30.3 Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածներ**

|                                          | 31.12.2022        | 31.12.2021        |
|------------------------------------------|-------------------|-------------------|
| Զօգտագործված վարկային գծեր               | 13,088,257        | 15,171,526        |
| Տրամադրված երաշխիքներ                    | 4,807,687         | 2,224,352         |
| Տրամադրված ակրեդիտիվներ                  | 95,889            | 97,405            |
| <b>Ընդամենը</b>                          | <b>17,991,833</b> | <b>17,493,283</b> |
| Նշված հոդվածների գծով պահուստ (ծանոթ. 7) | 15,903            | 4,347             |
| <b>Ընդամենը</b>                          | <b>17,975,930</b> | <b>17,488,936</b> |

**Ծանոթագրություն 30.4 Զբաղիված շահույթ (վնաս)**

| Զբաղիված շահույթ | 31.12.2022        | 31.12.2021        |
|------------------|-------------------|-------------------|
| -ընթացիկ տարվա   | 11,748,037        | 45,743            |
| -նախորդ տարվա    | 14,567,829        | 17,522,086        |
| <b>Ընդամենը</b>  | <b>26,315,866</b> | <b>17,567,829</b> |

**Ծանոթագրություն 31**

**Գործարքներ կապակցված կողմերի հետ**

Բանկի հետ կապված անձինք են համարվում բանկի ղեկավարները, բանկի բաժնետերերը և "Բանկերի և բանկային գործունեության մասին" ՀՀ օրենքով սահմանված՝ նրանց հետ կապված անձինք: Բանկի հետ կապված անձանց հետ գործարքներն իրականացվել են՝ ելնելով գործող պայմաններից և տոկոսադրույքներից:

**Պահանջներ այլ բանկերի նկատմամբ**

Բանկի հետ կապակցված անձինք 31.12.2021թ. և 31.12.2022թ. դրությամբ այլ բանկերի նկատմամբ պահանջներ չեն ունեցել:

| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ        | 31.12.2022                          |                                           |                                     |                                     |                                     | 31.12.2021                                |                                           |                                     |             |  |
|-----------------------------------------------------|-------------------------------------|-------------------------------------------|-------------------------------------|-------------------------------------|-------------------------------------|-------------------------------------------|-------------------------------------------|-------------------------------------|-------------|--|
|                                                     | բանկի բաժնետերեր և փոխադրված ամօինք | բանկի խորհրդի անդամներ և փոխադրված ամօինք | բանկի ղեկավարներ և փոխադրված ամօինք | բանկի ղեկավարներ և փոխադրված ամօինք | ԼՍՂԱՄԵՆԸ                            | բանկի բաժնետերեր և փոխադրված ամօինք       | բանկի խորհրդի անդամներ և փոխադրված ամօինք | բանկի ղեկավարներ և փոխադրված ամօինք | ԼՍՂԱՄԵՆԸ    |  |
| Մնացորդը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ             | 305,774                             | 19,962                                    | 342,857                             | 668,593                             |                                     | 430,342                                   | 26,592                                    | 177,767                             | 634,701     |  |
| Տարվա ընթացքում տրամադրված վարկեր և փոխառություններ | 29,699,565                          | 299,715                                   | 300,417                             | 30,299,697                          |                                     | 200,878                                   | 20,201                                    | 474,088                             | 695,167     |  |
| Տարվա ընթացքում մարված վարկեր և փոխառություններ     | 10,888,031                          | 312,603                                   | 310,999                             | 11,511,633                          |                                     | 325,446                                   | 26,831                                    | 308,998                             | 661,275     |  |
| Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ(համախառն)   | 19,117,308                          | 7,074                                     | 332,275                             | 19,456,657                          |                                     | 305,774                                   | 19,962                                    | 342,857                             | 668,593     |  |
| Արժեզրկումից պահուստ                                | 153,053                             | 37                                        | 927                                 | 154,017                             |                                     | 1,262                                     | 212                                       | 3,108                               | 4,582       |  |
| Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ             | 18,964,255                          | 7,037                                     | 331,348                             | 19,302,640                          |                                     | 304,512                                   | 19,750                                    | 339,749                             | 664,011     |  |
| Տոկոսային եկամուտ                                   | 1,646,081                           | 2,325                                     | 29,656                              | 1,678,062                           |                                     | 43,510                                    | 5,189                                     | 24,707                              | 73,406      |  |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ            | 31.12.2022                          |                                           |                                     |                                     |                                     | 31.12.2021                                |                                           |                                     |             |  |
|                                                     | բանկի բաժնետերեր և փոխադրված ամօինք | բանկի խորհրդի անդամներ և փոխադրված ամօինք | բանկի ղեկավարներ և փոխադրված ամօինք | ԼՍՂԱՄԵՆԸ                            | բանկի բաժնետերեր և փոխադրված ամօինք | բանկի խորհրդի անդամներ և փոխադրված ամօինք | բանկի ղեկավարներ և փոխադրված ամօինք       | ԼՍՂԱՄԵՆԸ                            |             |  |
| Մնացորդը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ             | 7,176,556                           | 952,059                                   | 82,897                              | 8,211,512                           |                                     | 9,753,236                                 | 2,176,132                                 | 84,823                              | 12,014,191  |  |
| Տարվա ընթացքում ստացված գումարներ                   | 233,702,117                         | 6,792,561                                 | 1,445,887                           | 241,940,565                         |                                     | 202,108,253                               | 3,733,670                                 | 1,334,537                           | 207,176,460 |  |
| Տարվա ընթացքում վճարված գումարներ                   | 230,974,759                         | 5,804,141                                 | 1,340,509                           | 238,119,409                         |                                     | 204,684,933                               | 4,957,743                                 | 1,336,463                           | 210,979,139 |  |
| Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ             | 9,903,914                           | 1,940,479                                 | 188,275                             | 12,032,668                          |                                     | 7,176,556                                 | 952,059                                   | 82,897                              | 8,211,512   |  |
| Տոկոսային ծախս                                      | 235,183                             | 81,678                                    | 5,293                               | 322,154                             |                                     | 236,964                                   | 86,147                                    | 4,704                               | 327,815     |  |

| <b>Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ</b> | <b>31.12.2022</b> | <b>31.12.2021</b> |
|------------------------------------------------------------------------|-------------------|-------------------|
| Մնացորդը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ                                | -                 | -                 |
| Տարվար ընթացքում ստացված գումարներ                                     | -                 | -                 |
| Տարվա ընթացքում վճարված գումարներ                                      | -                 | -                 |
| <b>Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ</b>                         | <b>-</b>          | <b>-</b>          |
| Տոկոսային եկամուտ                                                      | -                 | -                 |
| <b>Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ</b>     | <b>31.12.2022</b> | <b>31.12.2021</b> |
| Մնացորդը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ                                | -                 | -                 |
| Տարվա ընթացքում ստացված գումարներ                                      | -                 | -                 |
| Տարվա ընթացքում վճարված գումարներ                                      | -                 | -                 |
| <b>Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ</b>                         | <b>-</b>          | <b>-</b>          |
| Տոկոսային ծախս                                                         | -                 | -                 |

| <b>Բանկի ղեկավարությանը վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ նախորդ տասներկու ամիսների համար</b> | <b>31.12.2022</b> | <b>31.12.2021</b> |
|------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------|-------------------|
| Բանկի խորհրդին                                                                                             |                   |                   |
| - աշխատավարձ                                                                                               | 104,227           | 102,185           |
| - պարգևատրում                                                                                              | 13,250            | -                 |
| -սոց. հատկացումներ                                                                                         | -                 | -                 |
| Բանկի գործադիր մարմնին                                                                                     |                   | -                 |
| - աշխատավարձ                                                                                               | 292,802           | 297,400           |
| - պարգևատրում                                                                                              | 49,545            | -                 |
| -սոց. հատկացումներ                                                                                         | -                 | -                 |
| <b>Ընդամենը</b>                                                                                            | <b>459,824</b>    | <b>399,585</b>    |

### **Ծանոթագրություն 32 Ֆինանսական ռիսկերի վերաբերյալ նվազագույն բացահայտումներ**

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Բանկը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Բանկի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

#### Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկմանն ուղղված ամբողջ պատասխանատվությունը կրում է Բանկի խորհուրդը, սակայն, գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

#### Բանկի խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

#### Տնօրինություն

Տնօրինությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի վերահսկման համար:

#### Ռիսկերի կոմիտե

Ռիսկերի կոմիտեն ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման ռազմավարության, սկզբունքների, հայեցակարգերի, քաղաքականության և սահմանների մշակման ու կիրառման համար: Այն պատասխանատու է ռիսկերի կառավարման կարևոր խնդիրների համար և վերահսկում է դրանց նկատմամբ ընդունած համապատասխան որոշումների կատարումը:

#### Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է գործընթացների ներդրման և իրականացման համար, որոնք կապված են ռիսկերի կառավարման հետ, որպեսզի ապահովեն կառավարման անկախ գործընթացը:

#### Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է ռիսկերի կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի համար: Յուրաքանչյուր բիզնես ստորաբաժանման կազմի մեջ մտնում է ապակենտրոնացված բաժին, որը պատասխանատու է ռիսկերի անկախ վերահսկման համար, այդ թվում սահմանված սահմանաչափերի համեմատ ռիսկի ենթարկվածության չափերի վերահսկումը, ինչպես նաև նոր արտադրանքների և համակարգված գործընթացների ռիսկի գնահատումը: Տվյալ բաժինը նաև ապահովում է ռիսկերի գնահատման և հաշվետվության համակարգում ամբողջական տեղեկատվության հավաքը:

#### Բանկի ֆինանսական ստորաբաժանում

Բանկի ֆինանսական ստորաբաժանումը պատասխանատու է Բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարման, ինչպես նաև ողջ ֆինանսական համակարգի համար: Ֆինանսական ստորաբաժանումը պատասխանատվություն է կրում նաև Բանկի իրացվելիության ռիսկի և ֆինանսավորման ռիսկի համար:

#### Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Աուդիտի կոմիտե:

#### Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես սպասվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի: Մոդելում կիրառվում են նախորդ փորձից ստացված և շտկված հնարավորությունների նշանակությունները, հաշվի առնելով տնտեսական պայմանները: Բանկը նաև մոդելավորում է "վատագույն դեպքերը", որոնք տեղ կունենան քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:



Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Բանկը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Բանկը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Գործունեության բոլոր տեսակների գծով ստացվող տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվությունը բացատրություններով ներկայացվում է Տնօրինությանը, ռիսկերի կոմիտեին և բոլոր բաժնյաների ղեկավարներին: Հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ կրեդիտային ռիսկի համապարփակ չափի, կանխատեսումային կրեդիտային ցուցանիշների, ռիսկի սահմանված սահմանաչափերի բացառությունների վերաբերյալ, արժեքը ներառյալ ռիսկը (VaR), իրացվելիության ցուցանիշների և ռիսկի աստիճանի փոփոխության վերաբերյալ: Յուրաքանչյուր ամիս տրամադրվում է ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն ըստ բնագավառների, հաճախորդների և աշխարհագրական շրջանների: Եռամսյակային կտրվածքով ավագ ղեկավարող անձնակազմը որոշում է պահուստի ստեղծման անհրաժեշտությունը վարկային կորուստների համար: Տնօրինությունը եռամսյակային կտրվածքով ստանում է ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար:

Բանկի բոլոր մակարդակների համար կազմվում են ռիսկերի վերաբերյալ տարբեր հաշվետվություններ, որոնք տարածվում են, որպեսզի Բանկի բոլոր բաժնյաներին ապահովեն հասանելիություն ընդհանուր, անհրաժեշտ և ժամանակին համապատասխան տեղեկատվությանը:

Յուրաքանչյուր օր անց է կացվում կարճատև խորհրդակցություն ղեկավարության և Բանկի այլ աշխատակիցների մասնակցությամբ, որտեղ քննարկվում են սահմանված սահմանաչափերի պահպանումը, վերլուծվում է արժեքը ներառյալ ռիսկը VaR, ներդրումները, իրացվելիությունը, ինչպես նաև ռիսկի մակարդակում փոփոխությունները:

#### Ռիսկի նվազեցում

Բանկը ռիսկերի կառավարման շրջանակներում կիրառում է ածանցյալ և այլ գործիքներ դիրքերի կառավարման համար, որոնք առաջանում են տոկոսադրույքների, տարադրամների, ակցիաների արժեքի փոփոխության ռիսկի, վարկային ռիսկի ինչպես նաև ըստ նախատեսված գործարքների դիրքերի փոփոխությունների հետևանքով:

Բանկն ակտիվ կիրառում է ապահովումը, իր պարտքային ռիսկի նվազեցման համար (հավելյալ տեղեկությունը տե՛ս ստորև):

#### Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

## **Ծանոթագրություն 32.1 Վարկային ռիսկ**

### **Վարկերի ապահովվածությունը**

Վարկային պորտֆելի ապահովվածությունը հանդիսացող գրավները ըստ տեսակի տարբերակում ենք՝ անշարժ գույքի գրավ, շարժական գույքի գրավ և շրջանառության մեջ գտնվող ապրանքային մնացորդի գրավ:

Որպես անշարժ գույքի գրավ կարող են հանդիսանալ ՀՀ տարածքում առավել իրացվելի գոտիներում առկա բնակարանները, բնակելի տները, հասարակական նշանակության շինությունները, արտադրական նշանակության շինությունները և հողատարածքները: Հիփոթեքային վարկավորման դեպքում բնակարանները և բնակելի տները (այգետնակները) ապահովագրվում են:

Որպես շարժական գույքի գրավ կարող են հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցները, սարքավորումները, շինարարական տեխնիկան, հոսքագծերը, որոք ունեն շուկայում առավել իրացվելի արժեք:

Ավտոտրանսպորտային միջոցների գրավադրման դեպքում գրավը ապահովագրվում է վարկի մնացորդի չափով:

Որպես ապրանքային մնացորդի և շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավ կարող են հանդիսանալ առավել իրացվելի ապրանքատեսակները, պատրաստի ապրանքները, որոնք չունեն պիտանելիության սեղմ ժամկետներ և շուկայում սպառողների շրջանում ունեն մեծ պահանջարկ:

Որպես գրավ ընդունելի անշարժ գույքի որակական բնութագրիչներ կարող են հանդիսանալ վթարայնության կարգավիճակը, շինության արտաքին և ֆիզիկական մաշվածության ցուցանիշները, շինության կառուցման տարեթիվը և կոնստրուկցիան: Շարժական գույքի դեպքում հաշվի է առնվում գույքի ֆիզիկական վիճակը, թողարկման տարեթիվը, գույքի տեխնիկական հագեցվածությունը և մաշվածությունը: Ապրանքների որակական հատկանիշները որոշելիս հաշվի է առնվում արտադրող ֆիրմայի վարկանիշը և տվյալ ապրանքի պատրաստման ժամանակ օգտագործված նյութերի որակը, շրջանառու միջոցների վրա ունեցած ազդեցության գործոնը:

Գրավի շուկայական արժեքը ազատ մրցակցության պայմաններում նմանատիպ և նույն պարամետրերով վաճառված գույքի համեմատության ժամանակ ստացված արժեքն է: Լիկվիդացիոն արժեքը շուկայում առավել սեղմ ժամկետներում գրավի արագ իրացման արժեքն է, որը ներկայացնում է առանց շուկայական ռիսկերի գրավի իրացումը: Վարկի տրամադրման ժամանակ որպես վարկի գումարի հաշվարկի հիմք է ընդունվում գրավի գնահատված լիկվիդացիոն արժեքը, ինչով բանկը սահմանափակում է վարկի ժամկետի ընթացքում գրավի արժեքի նվազման ռիսկը: Նշված ռիսկը նվազեցվում է նաև այն հանգամանքով, որ անշարժ և շարժական գույքերի գրավով ապահովված վարկերի դեպքում վարկ/գրավի գնահատված արժեք հարաբերակցությունը չի գերազանցում 80%-ը:

Վարկեր տրամադրելիս բանկը մեծ կարևորություն է տալիս վարկառուի նախկինում ունեցած վարկերի սպասարկման պատմությանը, կայուն եկամուտների առկայությանը, մասնագիտական պատրաստվածությանը, քանզի նպատակ ունենալով ձևավորել որակապես կայուն վարկային պորտֆել, վարկերը հնարավորինս բարձր իրացվելի գրավով ապահովված լինելու փաստից բացի, առաջնային նշանակություն ունի վարկառուի պարտաճանաչությունը և վճարունակությունը վարկի սպասարկման առումով, ինչի հետևանքն է 2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ չաշխատող վարկերը կազմում են ընդհանուր վարկային պորտֆելի 2.34 %-ը (3 855 597 հազ. դրամ): Միաժամանակ նշենք, որ 31.12.2022թ. դրությամբ վարկային ներդրումները կազմել են 165 105 698 հազ. դրամ 30.09.22թ-ի 163 570 273 հազ. դրամի փոխարեն, այսինքն վարկային ներդրումներն աճել են 0.94%-ով:

### **Պահուստավորումների համապատասխանությունը**

Վարկերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորումը կատարվում է Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների պահանջների համաձայն:

### **Ռեպո և սվոպ գործարքները**

2022-թ.չորրորդ եռամսյակի ընթացքում կնքված ռեպո գործարքների ծավալը կազմել է 25 641 982 հազ. դրամ՝ նախորդ եռամսյակի 14 062 411 հազ. դրամի դիմաց՝ աճելով 82.34%-ով, հակադարձ

ռեպո գործարքների ծավալը կազմել է 70 697 984 հազ. դրամ՝ նախորդ եռամսյակի 144 341 979 հազ. դրամի դիմաց՝ նվազելով 51.05%-ով:

#### Աշխատակազմը

Բանկի կողմից որակապես կայուն վարկային պերտֆելի ձևավորումը արդյունք է նաև համապատասխան բարձր մասնագիտական պատրաստվածություն ունեցող մասնագետների, ներդրված աշխատանքային էթիկայի և թիմային աշխատելաճի ունակության:

Վերահսկողություն (մոնիտորինգ) և վարկային ռիսկերի հայտնաբերում

Վարկերի սպասարկման բարձր որակը և ժամկետանց վարկերի բացակայությունը արդյունք է նաև վարկերի սպասարկման ընթացքում մշտական վերահսկողության, վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում վարկառուների հետ հարաբերությունների և մշտական կապի պահպանման, ինչի արդյունքում բանկը մշտապես տեղյակ է վարկառուի ֆինանսական վիճակից և անհրաժեշտության դեպքում արագ արձագանքում է իրավիճակի փոփոխություններին՝ ցուցաբերելով անհրաժեշտ օժանդակություն և խորհրդատվություն իրավիճակի կայունացման համար: Նշված միջոցառումները խիստ նպաստում են ժամանակին վարկային ռիսկերը բացահայտելուն և դրանք նվազեցնելուն կամ իսպառ վնասագերծելուն: Վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում մշտական հսկողություն է իրականացվում նաև վարկի նպատակային օգտագործման, վարկի ապահովման միջոցի՝ գրավի նկատմամբ, ինչը կատարվում է Բանկի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների կողմից: Վարկի նպատակային օգտագործման մոնիտորինգն իրականացվում է ըստ անհրաժեշտության, վարկի օգտագործման ուղղությունների առանձնահատկությունների, վարկի կանխիկ և անկանխիկ գործարքների և այլն: Անշարժ գույքի մոնիտորինգը իրականացվում է երեք ամիսը մեկ անգամ, առանձին դեպքերում՝ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ: Շարժական գույքի մոնիտորինգը իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ առնվազն երեք ամիսը մեկ անգամ:

Եթե շուկայում տեղի է ունեցել գնահատված անշարժ գույքի գների տատանում մոտ 20%-ի չափով, ապա ելնելով Բանկի շահերից՝ Բանկը կարող է պահանջել կատարել Գրավի վերագնահատում:

Եթե գրավի արժեքը էապես էժամացել է շուկայում, ապա Բանկի պահանջով Վարկառուն առաջարկում է ապահովել լրացուցիչ Գրավով, որը, Բանկի հետ համաձայնեցնելով, գրավադրվում է հիմնական գրավի հետ միասին:

#### **ՀՀ տեղաբաշխված վարկերը՝ ըստ ՀՀ մարզերի տարածքում տեղաբաշխվածության**

| <b>ՀՀ մարզեր</b>  | <b>31.12.2022</b>  | <b>31.12.2021</b>  |
|-------------------|--------------------|--------------------|
| Երևան             | 125,107,871        | 113,419,508        |
| Գեղարքունիքի մարզ | 2,695,263          | 2,771,533          |
| Շիրակի մարզ       | 6,289,723          | 5,481,803          |
| Լոռու մարզ        | 3,054,798          | 2,582,385          |
| Վայոց Ձորի մարզ   | 16,698             | 15,129             |
| Արմավիրի մարզ     | 6,845,840          | 6,555,632          |
| Սյունիքի մարզ     | 1,504,518          | 1,472,384          |
| Տավուշի մարզ      | 2,459,322          | 2,243,458          |
| Արագածոտնի մարզ   | 1,716,699          | 1,465,347          |
| Կոտայքի մարզ      | 9,225,246          | 7,801,687          |
| Արարատի մարզ      | 3,681,783          | 3,540,780          |
| ԼՂՀ               | 885,986            | 1,791,736          |
| <b>ԸՆԴԱՄԵՆՆԸ</b>  | <b>163,483,747</b> | <b>149,141,382</b> |

Աշխարհագրական կենտրոնացումներ  
31.12.2022

| Հիդրվածի ամվանումը                                                                     | ՀՀ                 | ԱՊՀ երկրներ        | ՏՀԶԿ երկրներ        | Ոչ ՏՀԶԿ երկրներ    | Ընդամենը           |
|----------------------------------------------------------------------------------------|--------------------|--------------------|---------------------|--------------------|--------------------|
| <b>Ակտիվներ</b>                                                                        |                    |                    |                     |                    |                    |
| Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում                                        | 86,896,346         | 1,512,668          | 10,273,186          | 62,824             | 98,745,024         |
| Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ                       | 11,858,849         | 8,494,375          | 5,683,163           | 2,688,664          | 28,725,051         |
| Շահութակնատվ վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ                  | -                  | -                  | -                   | -                  | -                  |
